

Ճապոնական
դաստիարակությունը

Դասվար՝ Լ.Դանիելյան

Ճապոնական հասարակությունում ամենակարևորը ավանդույթն է: Թեև Ճապոնիայի ժամանակակից կառուցվածքում կա Արևմուտքի ազդեցություն, հասարակության խորը կառույցներին այն չի վերաբերում: Ճապոնիայում երեխաների դաստիարակությունը սկսվում է նրանց սեռի հստակ բաժանումից: Տղաների և աղջիկների դաստիարակությունը ամբողջովին տարբերվում է:

Որդին ընտանիքի ժառանգն է, որը կարող է դիմագրավել դժվարություններին: Դպրոցներում դասերից հետո տղաները այցելում են խմբակներ, որտեղ նրանք լրացուցիչ գիտելիքներ են ստանում և շարունակում կրթությունը, իսկ աղջիկները սրճարանում են նստում և խոսում իրենց կանանց գործերի մասին: Ճապոնական ընտանիքներում չկա «եղբայր» և «քույր» հասկացությունները, կան «ավագ եղբայր» և «կրտսեր եղբայր» բառերը, նույնը վերաբերվում է նաև քույրերին: Նույնիսկ, եթե երեխան մենակ է (որը Ճապոնական ընտանիքներում հաճախ չի լինում, միջինում կա երկու երեխա), այն դեռևս կոչվում է «ավագ»: Այս գաղափարը մեծի նկատմամբ հարգանքի դրսևորումն է :

Մայրիկի դերը Ճապոնական ընտանիքում

Ճապոնիայի ընտանիքում երեխաների դաստիարակությունը հիմնականում մայրերի ուսերին է, հայրը չի մասնակցում այս գործընթացին, հատկապես երեխայի կյանքի առաջին տարիներին: Ճապոնիայում, նույնիսկ մայրիկի համար հատուկ բառ կա՝ «այո»: Այն արտահայտում է երեխայի խորը և ցանկալի կախվածությունը իր կյանքի գլխավոր անձից :

Իսկապես, այս երկրում հազվադեպ կարելի է տեսնել մի աղաղակող կամ լաց լինող երեխա:

Մայրը փորձում է անել ամեն ինչ այնպես, որ արցունքների համար երեխային երբեք որևէ պատճառ չլինի:

Ճապոնական հագուստի խանութներում վաճառվում են նաև հատուկ բաճկոններ՝ երեխաների համար ստեղծված գրպանիկով: Գիշերվա ընթացքում երեխան մշտապես քնում է մոր կողքին:

Ճապոնացի մայրը երբեք չի շեշտում իր առավելությունը երեխաների նկատմամբ, քանի որ այն կարող է հանգեցնել օտարացման: Մայրը երբեք չի մերժում երեխայի ցանկությունը: Ու, եթե նա իր դժգոհություն է հայտնում որդու կամ դստեր որևէ արարքի համար, անուղղակիորեն է անում այն: Նա հստակեցնում է, որ շատ է զոջում երեխայի վարքագծի համար: Վիճելու ժամանակ մայրը երբեք չի հեռանում երեխայից, այլ հակառակը, փորձում է ավելի մոտ լինել նրան, որպեսզի ամրապնդի հուզական շփումը:

Ճապոնական դաստիարակությունը ունի իր թերությունները: Ճապոնիայում ընդունված չէ օգնել մայրիկներին՝ լվանալ սպասքը, մաքրել սենյակները:

Ճապոնական դաստիարակության երեք քայլերը

Այս երկրում երեխայի տարիքը բաժանում է երեք փուլի:

0-ից մինչև 5 տարեկան հասակում ճապոնացի երեխան համարվում է «կայսր»:

5 տարեկանից 15 տարեկանում երեխան համարվում է «ստրուկ»:

Եվ 15 տարեկանից հետո նրան համարում են «հավասար»:

Պետք է անմիջապես զգուշացնեն, որ ուսուցման այս մեթոդը կատարյալ է միայն Ճապոնիայում, քանի որ այդ

սկզբունքներին հետևում է ամբողջ երկրիրը՝ մեզապոլիսներից մինչև մարզեր:

1 փուլ

Կայսր

Առաջին փուլը զարմացնում է նրանով, որ երեխային չի արգելվում ոչինչ: Միայն ծայրահեղ դեպքերում լսում են նախազգուշացումները, « կեղտոտ է», « վատ է» կամ « վտանգավոր է»:

Երբ երեխան սկսում է քայլել, մայրը նրան բառացիորեն հետևում է: Հայրը հայտնվում է երեխաների կյանքի այս շրջանում միայն շաբաթվա վերջին զբոսանքի ժամանակ: Լավ եղանակին, ճապոնական զբոսանքները զբոսայգում են, իսկ վատ եղանակին գնում են առևտրի կենտրոններ և սուպերմարկետներ, որտեղ կան մանկական խաղահրապարակներ:

Ճապոնացի ծնողները իրենց ձայնը չեն բարձրացնում երեխաների վրա, նրանք երբեք չեն դասախոսում նրանց, բացառվում է նաև մարմնական պատիժը: Կրթական մեթոդները այստեղ բոլորովին այլ են: Օրինակ, դաստիարակության այս մեթոդը լայն տարածում ունի, որը կարելի է անվանել «օտարման սպառնալիք», ամենափոքր և մեծ ճապոնացիների համար, ամենասարսափելի բարոյական պատիժը՝ տնից, ընտանիքից, կոլեկտիվից հեռացնելն է:

Ճապոնական հասարակությունը բաղկացած է խմբերից, ոչ թե անհատներից: Բավական է ասել ճապոնացի երեխային «Եթե դու այդպես վարվես, բոլորը կձաղրեն քեզ» և նա լրջորեն կանդրադառնա իր վարքագծին: Մենակությունը պատիժ է ճապոնացիների համար:

Ճապոնիայում չկա հրապարակային դատապարտում, այստեղ մեծահասակները երբեք երեխային և նրա մորը փողոցում ոչինչ չեն ասում, նույնիսկ եթե այդ երեխան վատ վարք դրսևորելով, որը մեզ բնորոշ չէ:

Համեմատության կարգով ասեմ,որ

Մեր քրիստոնեական աշխարհում 7 տարեկանից փոքր երեխան համարվում է «հրեշտակ», իհարկե ներվում և թույլատրվում է ամեն ինչ այն պայմանով, որ նա մեծացել է քրիստոնեական կանոնների և սովորույթների համաձայն:

2 փուլ

«Ստորուկ»

Այս ժամկետը երկար է, քան առաջինը: Հինգ տարեկանից իրավիճակը կտրուկ փոխվում է, իսկ ճապոնական երեխաների դաստիարակությունը իրականացվում է խիստ կարգապահության մեջ:

Այս տարիքում ոչ միայն երեխայի վարքն է խիստ կարգավորվում, այլև նրա տեսքը: Ճապոնական դպրոցն այն վայրն է, որտեղ երեխաները պահպանում են զսպվածություն, հարգանքով են վերաբերվում ուսուցիչներին և մեծերին: Այս տարիքի երեխաների մեջ ներգրավված հիմնական սկզբունքները նախատեսված են հասարակության բոլոր անդամների համար, առանց հաշվի առնելու նրանց ծագումը և ընտանիքի ֆինանսական վիճակը:

« Ինչպես բռնորդ, այնպես էլ դու», սա ճապոնական դպրոցական կյանքի հիմնական սկզբունքն է:

3 փուլ

«Հավասար»

Այս տարիքում հասարակության մեջ երիտասարդն արդեն համարվում է մեծահասակ, որը կարող է պատասխանատվություն կրել իր, իր ընտանիքի և ամբողջ պետության համար:

Այս պահին երիտասարդ ճապոնացիները պետք է հստակ իմանան և հետևեն հասարակության մեջ ընդունված բոլոր կանոններին: Կրթական հաստատություններում նա պետք է հետևի ավանդույթներին և ստանդարտներին, բայց ազատ ժամանակ նա կարող է վարվել այնպես, ինչպես ցանկանում է՝ հազնել ցանկացած հագուստ, որը նա սիրում է և այլն:

Յուրաքանչյուր դաստիարակություն ունի իր նպատակը

Ճապոնական մանկավարժության հիմնական խնդիրն է կրթել կոլեկտիվի անդամ: Կոլեկտիվի շահերը առաջնային են, սա է համաշխարհային շուկայում ճապոնական ապրանքների հաջողության գրավականը: Այստեղ սովորում են մանկությունից աշխատել խմբով, հասարակության համար պատասխանատու լինել: Հասկանալ և շարժվել անկախ իրենց մտածելակերպից: Իսկ հանրային ստանդարտին համապատասխանության գաղափարը այնքան արմատացած է ճապոնացի երեխաների մեջ, որ հասակակիցների արտահայտած անկախ մտքերը դատապարտվում են:

Այնուամենայնիվ, ամենակարևորը յուրաքանչյուր ճապոնացի ունի երախտագիտության զգացում, երկրի ավանդույթների և պատմության հանդեպ հարգանք, հարգանք նաև ծնողների և մեծերի նկատմամբ: